ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ԿԻՑ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 Փետրվար 2019թ

ք. Երևան

ՀՀ ԱԺ տնետսական հարցերի մշտական հանձնաժողովը (այսուհետ Հանձնաժողով), մի կողմից և փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ ՓՄՁ) շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և առևտրաարդյունաբերական պալատ(ների) ներկայացուցիչները, մյուս կողմից (այսուհետ գործարար շահերի կառույցներ՝ ԳՇԿ-ների)՝

կարևորելով Հայաստանի Հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը,

նպատակ ունենալով ապահովել ՓՄՁ-ների համար գործարար միջավայրի բարելավման հարցերով օրենսդիր մարմնի և գործարար համայնքի արդյունավետ երկխոսությունը, համաձայնեցին հետևյալի մասին.

1. Ստեղծել Հանձնաժողովին կից ՓՄՁ-ների միջև երկխոսությունն ապահովող ՓՄՁ երկխոսության հարթակ (այսուհետ՝ Հարթակ):
2. Հարթակը՝ խորհրդակցական, անկախ երկխոսության հարթակ է, որի անդամ հանդիսացող ԳՇԿ ներկայացուցիչներն անդամագրվում և ընդգրկվում են Հարթակի կազմում կամավորության սկզբունքով:
3. ԳՇԿ ներկայացուցիչներն իրենց պատրաստակամությունն են հայտնում աջակցելու Հանձնաժողով-ՓՄՁ երկխոսությունն ապահովելու, Հարթակի քննարկմանը ներկայացված օրենսդրական նախագծերի շուրջ հանրային կարծիք ձևավորելու, օրենսդրական փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու հարցերում:
4. Հարթակի աշխատակարգը և կանոնադրությունը, Հանձնաժողովի նախագահի հաստատմանն է ներայացվում սույն Հուշագիրը ստորագրած ԳՇԿ -ների ներկայացուցիչների կողմից:

5. Հարթակն իր աշխատանքներն իրականացնում է նսիտեր գումարելու միջոցով, համաձայն Հարթակի կանոնադրության և աշխատակարգի:
6. Սույն Հարթակի ստորագրմանը միանում են Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող գործարար շահերը ներկայացնող այն ԳՇԿ-ները, որոնք բավարարում են ստորև թվարկված չափորոշիչներին.
   - Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող ձեռնարկատերերի կամ ձեռնարկությունների անդամության վրա հիմնված կազմակերպություններ են, կամ դրանց կոալիցիա,
   - Վերջին երեք տարիներին ծավալել են ակտիվ գործունեություն, հրավիրել են տարեկան համագումարներ, ժողովներ իրենց անդամ կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցիչների մասնակցությամբ,
   - Կազմակերպությունների կամ դրանց կոալիցիայի կազմում ընդգրկված կազմակերպությունների անդամների առնվազն 1/3-ը ՓՄՁ ներկայացուցիչներ են,
   - Սույն Հուշագրի ստորագրման պահին կազմակերպության կամ կոալիցիայի կազմում ընդգրկված կազմակերպություններին անդամագրված է առնվազն 50 ձեռնարկություն կամ դրանց ներկայացուցիչներ:
7. Սույն Հուշագիրը ստորագրած ԳՇԿ-ները լիազորում են «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ին, սույն Հուշագրի ստորագրումից հետո հնգօրյա ժամկետում Հանձնաժողովի նախագահի հաստատմանը ներկայացնել Հարթակի՝
   - կանոնադրությունը,
   - անդամների ընտրության կարգը,
   - աշխատակարգը:
8. Հարթակին անդամագրվելը կամավոր է և անդամագրվել կարող են այդ մասին ցանկության հայտնած ԳՇԿ-ները: Անդամագրման կարգը և չափանիշները կսահմանվեն Հարթակի կանոնադրությամբ: Հարթակի անդամ հանդիսացող ԳՇԿ-ների թիվը չի կարող ավել լինել քան Հանձնաժողովի անդամ հանդիսացող պատգամավորների թիվը:
9. Հարթակի հիմնադիր անդամ ԳՇԿ-ների հրավերով, Հարթակի քարտուղարության աշխատանքներին տեխնիկական աջակցությունն ապահովում է ՎՋԵԲ «Գործարարության աջակցման գրասենյակը»:
10. Հարթակի քարտուղարությունը ստանձնում է «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-նո, որի աշխատակարգը սահմանվում է սույն Հուշագրի 7-րդ կետով սահմանված կարգով հաստատված աաշխատակարգով:

Հուշագիրը ստորագրեցին՝

Գործարար շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչներ՝

#	*Կազմակերպության Անունը՝*	*Լիազոր ներկայացուցչի պաշտոնը, անուն ազգանուն, ստորագրություն՝*
1	ՀՀ ԱԺ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով	Նախագահ՝ Բաբկեն Թունյան
2	«ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ	Փոխնախագահ՝ Հակոբ Ավագյան
3	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»	Գործադիր տնօրեն՝ Կարեն Վարդանյան
4	«Երևանի Առևտրաարդյունաբերական պալատ»	Նախագահ՝ Անդրանիկ Ալեքսանյան
5	«Հայաստանի տրանսպորտային առաքողների միություն»	Նախագահ՝ Եղիշե Հովհաննիսյան
6	Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինք	Համանախագահ՝ Հայկ Մինասյան
7	Հայկական բիզնես կոալիցիա	Կառավարման խորհրդի նախագահ՝ Գագիկ Պողոսյան